1 – 10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանի համարը վերցրո՛ւ շրջանակի մեջ:

1 Տրված թվերից ո՞րն է պարունակում է 5 հազարյակ, 2 հարյուրյակ և 3 միավոր:

1) 5032
2) 5203
3) 5230
4) 5023

2 Ինչպե՞ս կփոխվի թվերի գումարը, եթե գումարելիներից մեկը մեծացնենք 3-ով:

1) կմեծանա 3 անգամ
2) կփոքրանա 3 անգամ
3) կմեծանա 3-ով
4) կփոքրանա 3-ով

3 Որքանո՞վ կմեծանա եռանիշ թիվը, եթե նրա գրությանը ձախից կցագրենք երեք թվանշանը:

1) 3-ով
2) 30-ով
3) 300-ով
4) 3000-ով

4 Տրված թվանշաններից ընտրի՛ր այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս ճիշտ անհավասարություն. 2 տ 570 կգ < 2 տ 5* 0 կգ

1) 5
2) 6
3) 7
4) 8

5 Ո՞ր շարքում գրված բոլոր թվերն են բաժանվում և՛ 2-ի և՛ 5-ի:

1) 125, 250, 4380, 5285
2) 90, 340, 2550, 3190
3) 512, 920, 1375, 5260
4) 62, 158, 864, 3520

6 Արտահայտի՛ր **250000 մ**-ը կիլոմետրերով:

1) 25 կմ
2) 250 կմ
3) 2500 կմ
4) 25000 կմ

7 Քանի՞ րոպե է $\frac{1}{3}$ ժամը:

1) 10 ր
2) 20 ր
3) 30 ր
4) 40 ր

8 Թվային առանցքի վրա տրված են D(4) և C(11) կետերը: Գտի'ր DC հատվածի երկարությունը:

1) 11
2) 7
3) 4
4) 15

9 Տետրն ունի 12 էջ: Գայանեն գրել է տետրի էջերի $\frac{1}{4}$-ի վրա: Քանի՞ էջ է մնացել այդ տետրում գրելու:

1) 3
2) 6
3) 8
4) 9

10 Ո՞ր շարքում են թվերը դասավորված նվազման կարգով:

1) 199, 294, 5617, 7318
2) 7318, 5617, 294, 199
3) 7318, 5617, 199, 294
4) 199, 294, 7318, 5617

11- 15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրի՛ր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

11 Կատարի՛ր բաժանում մնացորդով, որպես պատասխան գրի՛ր մնացորդը:

457 : 3

Պատ.՝……

12 Գտի՛ր 506 և 442 թվերի տարբերության և 8-ի քանորդը:

Պատ.՝……

13 Հաշվի՛ր 618 · 5 – 8491 : 7 + 123 արտահայտության արժեքը:

Պատ.՝………………

14 Տրված թվերից հետո գրի՛ր ևս մեկ թիվ ըստ օրինաչափության:

9, 20, 42 , 86, ...

Պատ.՝………………

15 Աստղանիշների փոխարեն գրի՛ր բաց թողած թվանշանները, որպես պատասխան գրի՛ր քանորդը:

```
_4240 | *0
 4*   |----
 ---  | 2*2
 _*4
  2*
  ---
  _*0
   40
   ---
    0
```

Պատ.՝………………

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրո՛ւ առաջադրանքներից հետո նշված տեղում:

16 Ամառային արձակուրդի օրերին Անահիտը կարդաց երեք գիրք. առաջինն 87 էջանոց էր, երկրորդի էջերը 5 անգամ շատ էին առաջինի էջերից, իսկ երրորդի էջերը 174-ով քիչ էին երկրորդի էջերից: Քանի՞ անգամ են երրորդ գրքի էջերն առաջին գրքի էջերից շատ:

Պատ.՝……

17 Քառակուսի հողամասի երեք կողմերը շրջապատված են 45 մ երկարություն ունեցող ցանկապատով: Գտի՛ր այդ հողամասի մակերեսը:

Պատ.՝……